

ՊԱՏՄԱԿԱՆ

Ս Ո Ւ Բ Ա Ր Ի Ն Ե Ր

Հայոց պատմականության առաջնային մասերի մասին գլուխ աշխատանքները

Սուրաբիների հնութիւնը հասնում է մինչեւ 3000-ամեակը (մ.թ.ա.) , ըստ ոմանց՝ (Հրոդոնի) մինչեւ 4000-ամեակը : ՊրոՓ . Խաչատրեանն իր յիշեալ աշխատութեան մէջ Սուրաբիներին համարում է Խարբի-Միտանիներից առաջ վերին Միջազգետքում կենտրոնական իշխանութիւն հաստատած եւ այնտեղից գէպի արեւելեան Փոքր Ասիա , Հիւսիսային Սիրիա ու Արմենիա տարածուած մի ցեղախումբ , որ իր բնակութիւնն ու իշխանութիւնն է հաստատել այդ երկրներում :

ՊրոՓ . Ա . Խաչատրեանը հետեւելով էղ . Մեյերին , Ռւզնատին ու Սիրիայի Սմիթին , ինքը եւս ընդունում է , որ Սուրաբիները յիշեալ երկրների պատմական հնագոյն ժողովուրդն են Հանդիսացցէլ : Նրանք երբորդ հազարամետակից սկսած ունեցել են իրենց հզօր կազմակերպուած պետութիւնը Միջազգետքում , հիւսիսային Սիրիայում եւ Արմենիայում : Սուրաբիները , ըստ զիտնական Սմիթին , նկատում են Ասորեստանի հիւսիսից եւ հիւսիս արեւելքի յինքներից իջած մի ժողովուրդ : Խոկ ամերիկացի զիտնական Վոլլին (Wolley) իր «Բարբարիչ» (Barbarian) (Ճարտարապետու) աշխատութեան մէջ յայտնում է , թէ՝ երբ Միջազգետքի խազաղասէր բնակչութիւնը նոր քարային ժամանակների մէջ էր ապրում եւ երբ զեռ նոր էր սկսել պղնձի հետ ծանօթանալ , մի նոր ցեղ զալիս ու հասնում է այնուեղ (այս նոր ցեղերը հաւանաբար Սուրաբիներն են եղել) , որոնք սագմիկներ էին եւ ունէին իրենց յատուկ բարքերն ու բարձր կուլտուրան : Նրանք հաստատուելով Միջազգետքում իրենց են ենթարկում տեղական բնակչութիւնը եւ ստեղծում են բարձր քաղաքակրթութիւն , որ Սումեր-Ակադակացիներից փոխառութիւն էր : Սուրաբիները՝ Սումերներից սովորում են բեւեռաղիք արձանագրութիւնների գործածութիւնը եւ երկոր ժամանակ օգտագործում են Ակկադեան (Ասորա-Բարեւական) լեզուն : Նրանք երկար ժամանակ պատերազմներ են մղում Ակկադեան թագաւորների դէմ իրենց անկախութիւնը պահպանելու համար : Եւ իրօք , յամառ պայքարների չնորհիւ կարողանում են ազատ ու անկախ ապրել : Սուրաբատուի պետական հզօրութեան մասին զիտնական Ֆորքերն այսպէս է գրում . «Սուրաբատուն Համմուրաբիի ժամանակ (1955-1913) նրա մեծ ախոյեանն էր : Խոկ Շամշի-Աղադ Ա-ից (1879-1847) նախասիայի քաղաքական ճակատագիրը Սուրաբին էր վարում իրեն աշխարհի թագաւորութիւն : Ազում Ա-ի օրով (1731-1710) Սուրաբուի կողմից մի մեծ բարձակում է տեղի ունենում Խատուի երկրի վրայ ։ Թէպէտ եւ այս մեծ յարձակումը տիրեց բոլոր քաղաքներին մինչեւ Խատուի պետութեան ներս , սակայն , Խանախիս Ա (1740-1700) կարողացաւ ետ մզել : Այսուհետեւ այս

¹ Եղիշա Ս . Քասունի , «Նախահայկական Հայաստան» , էջ 65 :

ալիքը յորձանք տուեց դէպի Եղիսպոս, որ զոհ գնաց նրան ու մօտաւորապէս 1700-1580 միաց Հիւրսոս թաղաւորների տիրապետութեան տակ : Այս վերջններիս մեկնակէտը Սուրաբտուն է» :

Սուրաբի պետութեան անկման պատճառ են դառնում Բարեխոնի Ակեղաղեան թաղաւորների յարատեւ յարձակումները, որոնց առջեւ վերջապէս Սուրաբիները տեղի են տայիս ներքին անմիասնականութեան պատճառով, ընկեւում են եւ ենթարկեում նրանց գերիշխանութեան : Ակեղաղեան թաղաւորները այն աստիճանն սաստիկ ճնշում են ու քայլայում Սուրաբի բնակչութիւնը որ հըրլու հպատակների են վերածում : Այս առթիւ ուշադրաւ են դիտնական Սմիթի դատումները . «Հակառակ այս ժողովրդի այնքան տարածուն լինելուն ու պատահական յաջողութիւններին, որ նրան բաժին ընկաւ Սումմերների դէմ մզած պատերազմներում, ապացոյց չկայ թէ նրանք հնագոյն ժամանակներում կազմած լինեն մի միացեալ թաղաւորութիւն, որ կառավարուէր մի կենորոնական քաղաքով ու մի թաղաւորով : Շատ աւելի հաւանական է, ինչպէս սովորաբար յենցիներն են, որոնց տեղայնամտութիւնը արդեւր է լինում միութեան ու կենտրոնական կազմակերպութեան, որոնց պակասը զրկել է Սուրաբիների յաղթութիւնը տեւական նշանակութիւնից» :

Նախա-Հայաստանում Սուրաբիների նախարանիկներ լինելու հարցի տոմիւ իրրեւ ապացոյց պատմազրութիւնը (յատկապէս Պրոֆ Ա. Խաչատրեան եւ նրա հետեւորդները) վկայակոչում է աշխարհազրական մի քանի տանուններ եւ դրանք ընդունում Սուրաբի ժողովրդի գոյութեան ապացոյց : Այդ անուններն են՝ Մուղանի, Մոփը (Չորրորդ Հայք), Միզան կամ Սիմիան լեռնադաշտները (Տես՝ Թ. Խ. Յակոբեան, «Հայաստանի պատմական աշխարհ-Հազրութիւն», Երևան, 1960, էջ 66-67) :

Ամփոփելով այս ուրուզային տեսութիւնը, տեսնում ենք, որ Պրոֆ. Խաչատրեանն ու նրա հետեւորդները, Սուրաբիներին ընդունում են նախասիայի ամենահնագոյն ժողովուրդը, որ երրորդ հազարամեկի սկզբից Սումմերեան արձանագրութիւնների մէջ կոչում են Սուրաբու կամ Սուրաբու, սկսում են տարածուել Մերձաւոր Արեւելքի վրայ եւ դրաւում Փոքր Առիայի բոյոր երկրները, նրանց թւում և Հայաստանը, ուր եւ դառնում են միակ ցեղը եւ կամ աւելի նիշտ միակ տիրապետող ու մեծամասնութիւն կազմող քրնակիչութիւնը (Տես՝ Ա. Խաչատրեանի վերոյիշեալ գիրքը, էջ 72-73-441) (ընդդումը մերն է — Գ. Հ.) :

Պրոֆ. Արշակ Ալապոյաննան անգրադառնում է այս հարցերին իր «Էլեսարիայի պատմութիւնը» ստուարածաւալ հատորի տառջին մասում, ինչպէս եւ հետազայում համառօտիս իր «Պատմական Հայաստանի սահմանները» զործում եւ ընդունելով Հանդիրձ Պրոֆ. Ա. Խաչատրեանի տեսակէտը, աւելացրնում է նաև, Սուրաբիների դրաւած ընդարձակ երկրամասների առթիւ, թէ «Դիտուններուն մէջ ընդհանուր համաձայնութիւն չկայ» : Հայաստանի կառակցութեամբ նա այն կարծիքն է յայտնում, թէ Սուրաբիները տիրել են «Հայկական բարձրաւանդապին հարաւային մասները» : Եւ ապա եղրակացնում «Բայց Հայկական բարձրաւանդապին հիւսիսային մասերուն մէջ իրենց բնակութիւնը անձանոթ է» :

Այս կարծիքների մէջ տիրող Հակասութիւնը ակնբախ է : Նախ եւ առջ՝ Պրոֆ. Խաչատրեանը հետեւելով Ռւնդնատին, է. Մելքոնին ու Սիմեոնէ

² Ալշակ Ալապոյաննան, «Պատմական Հայաստանի սահմանները», էջ 6 :

Սմբիթին, երբ Սուրաբիներին ընդունում է ազգակարգոր կտղմակերպությօնից պիտութիւնն Արմենիայում, Հիւսիսային Արքայում ու Միջամատքությունում՝ ապա՝ «Արմենիան» չատ ընդհանուր ու անորոշ համականութիւնն է Անունական Առաջ բարիների կողմից ափրապետուած Արմենիայի սահմանները վաստանակ որոշակի կերպով ընդգծելու (խօսքը՝ Սուրաբիների տիրապետութեան սահմանների մասին է Արմենիայում), անդիս է ոչ համույնցուցիչ պատասխանն ։ Են դրում է, «Սուրաբին և Ծոփաց աշխարհի քաղաքական սահմանները դարերի ընթացքում չատ փոփոխութեան են ենթարկուել, բայց իր կենարանական մասը միշտ էլ մնացել է նոյնը՝ այն է այժմ ևս Տիգրիսի ևս սառըին Արածանու տաղուտները»³։ Երկրորդ՝ «Հայկական բարձրաւանդակ» համացնութիւնը աշխարհաւագրական ափբաղջջարկան տարածութիւն է (այսինքն՝ ըստ Խաչատրեանի եւ նրա համակարգիք հեղինակների՝ Արմենիան)։ որի մասին քիչ վերեւ առում էր; Այս Սուրաբիներից իրեւ «միակ» նախանշանական ժողովրդից կոմմաւելի ճիշտ, միակ տիրապետ ու մեծամասնութիւն կազմող ցեղերից ընտկցուած երկիր է», իսկ հիմա այս առանձում է, որ Առարիները «Հայկական բարձրաւանդակ» հարաւային մասերը՝ դանուած քակի չներ են (ինչ որ աւելի ճիշտ է անշուշտ — Գ. Հ.) եւ «Հայկական բարձրաւանդակի Հիւսիսային մասերուն էկ իրենց բնակութիւնը անձանաթ կր մնայ» (Ա. Աղօյանան, «Պատմական Հայուսանի սահմանները»)։

Այս ուղղման օդտին գալիս են միկոյելու այդ միեւնոյն հեղինակների խոկ կողմից եղած յարաբարութիւնները, թէ «Երկրորդ Հարիւրամեակին (Ժ. Բ. ա.) հիւսիսային Հայաստանից արքական ցեղեր գաղթարշաւով հետզետել զանազան ուղղութեամբ ծաւալում են ու սորի կուռաններ են սաեղծում և ի միջի այլոց (ընդգծումը մերն է — Գ. Հ.) նաւաճում են հարաւային Հայաստանը տիրու Սուրաբիները եւ նրանց հոգերի վրայ կազմում Խարրի-Միտաններն պետութիւնը» (Ա. Աղօյանան, նոյն տեղ)։

Ինչպէս տեսնում ենք «ի միջի այլոց» եւ ոչ հիմնովին կամ ամրող ջույնին։ Եւ արդէն յատակ է դառնում, որ հետագայում, երբ արշաւում են Խարրի-Միտանները, նրանք գալիս ու դրաւում են ի միջի այլոց նաեւ Հայաստանի հարաւային մասերը, որ Սուրաբիների հշանութեան տակ էին դրունում։ Աւրեմն, ճշուում է, որ Սուրաբիները ազրում էին հարաւային Հայաստանի այն սահմանների վրայ, որոնց ծայրամասերը միանում էին Միջադեմքի հիւսիսային կողմերին, այսինքն՝ բուն Սուրաբու պետութեան սահմաններին⁴։

Սուրաբիներն արդէն վաղուց նստարնակ էին գարձել որպէս զիւղական հոգած համայնք համայնք եւ կամ քաղաքի բնակչութիւն, երբ մեր թուարկութիւնից առաջ երկրորդ Հաղպարամեակում նոր ցեղերի մի հոսանք մանում է Միջադեմք եւ իր իշխանութիւնն է հաստատում Սուրաբու երկրի վրայ եւ իրեն է ենթարկում նրա ժողովրդին։ Այդ նոր ցեղերը Խարրի-Միտաններն էին։

Աւշագրաւ է, որ ոմանք պատմազիրներից Խարրիներին ամրողջովին նոյնացնում են Միտանների հետ, իսկ ոմանք էլ ձգտում են որոշապէս տարրերի առաջիններին երկրորդներից։ Բացի այդ, դիտնականների մի մասը, «Խարրիներ»ին համարում են Հուրրիների կամ Հարրիների հետ համացեղ ժողովարդ, իսկ մի ուրիշ մասը՝ Հուրրիներին Սուրաբու ժողովրդին հետ ըն-

³ Պրոֆ. Ա. Խաչատրեան, «Հայաստանի սեպ. շրջ. պատմ.», էջ 37-40։

⁴ Այս մասին իր տեղում կը խօսուի աւելի հանգամանքէ։

բունում են Միտանի պետութեան ստորախաւը :

Պատմադիբների այն մասը, յայտնում է Եղիա Քառունին, որ այս ցեղախմբերին «Խարբի» կամ «Հարբի» (Հուրրի) է կարդում, այդ անուանումը տարւում է Արիներ (Արցոյ) անուան մէկ փոփոխուած ձևը նկատելու : Եւ ուրովհետեւ Միտանիների ազնուական գասակարգն էլ Հնդեւրոպական ծագում ունէր, հստեւարար՝ առաջիններին («Հարբիներին», «Խարբիներին») նոյնացընում են այս վերջինների («Միտանիների») հետ : Խոկ պատմադէտներից ումանք էլ (Հրովին եւ իր հստեւորդները) Հուրրիներին կամ Խուրրիներին ցանկանում են խստի զատորոշչի Միտանական պետութեան իշխող զասակարգից եւ համարում են ժողովրդի ստորախաւը : Հրովին, Ֆորրեր, Հայր Տաշեան եւ այլ գիտնականներ «Հուրրի» ժաղովրդին համարում են Միտանի պետութեան (վերին Միջանդասիք) ընիկ ժողովրդը, մինչ ուրիշներ նրանց դիմումին նոյնացընում են Միտանիների հետ⁵:

Պրոֆ. Խաչատրեանը «Խարբի» անունն է տայիս Միտանիներին, բայն ստուգարանելով իրեւ «արիներ», այսինքն՝ արիական զաղթականների մի տեսակ տիտղոս, ազնուական զաս, Առւրարի ժողովրդի վրայ զեկավար ու տապահող տարր Միտանիների թաղաւորութեան չրջանում : Միտանին Պրոֆ. Անճառեան «Խարբիներին» ընտրունում է՝ Միտանիների մի միջին եւ նրանց իշխուն Միտանիների մի բարբառը : Այսպիսով, ասում է նաև, պատմութեան մէջ յօւնախ Խարբի Միտանիները նոյնանում են իրեւ միեւնոյն ժողովուրդ (Տե՛ս Հ. Աճառեան, «Հայոց լեզուի պատմութիւն») :

Այսպիսով, համեմատելով առարեւ Հեղինակների տուեալիները, տեսանում ենք, որ մէկի պատմածները Հուրրիների (Հուրրի, Խարբի) Համար միջնորդուով վերաբերում են Միտանիներին, ուրիշների հազորգած տեղեկութիւնները վերջիններին մասին՝ լրիս չափով վերապրելի են տառջններին :

Նորագոյն չրջանի հայ պատմադիբներից Եղիա Ա. Քառունի իր «Նախայակական Հայաստանը» ուշազրաւեւ արժէքաւոր աշխատութեան մէջ Հիմունելով լուրջ Հեղինակութիւնների կարծիքների վրայ՝ խիստ կերպով տարրերում է Հուրրիներին Միտանիներից : Նա յայտնում է, որ Հին քեւեռադիր արձանադրութիւնների մէջ Հուրրիները յիշում են իրեւ կարեւոր ցեղ կամ ժողովուրդ մերթ Միտանիների առնյութեամբ, մերթ նրանցից անկախարար : Այսպիսով, Հուրրիները իրեւ առանձին ու անջատ ցեղ՝ Միտանիներից առաջ զաղթել եկել են Միջազեսք, զրաւել Սուրարատուն, իրենց թագաւորութիւնն են Հիմնել Սուրարեների երկրամակների վրայ :

Պրոֆ. Խաչատրեանը ճանաչում է միայն Խուրրի-Միտանիներին, որ երկրորդ հազարամեակում (մ.թ.ա. 4) «Նեսիխան» կամ «Նեսիխա» ցեղերի հետ իրեւ նրանց մէկ ճիւղը, զալիս են կովկաս, ատրածուում հայկական բարձրաւանդակի վրայ եւ այնտեղից էլ ի թնաւմ հարաւա-արեւմծուտք՝ Առւրարի, զրաւում Հիւսիսային Միջաղետքը եւ բնակութիւն հաստատում այդ պետութեան մէջ իրենց ենթարկելով տեղական բնակչութիւնը՝ Սուրարեներին :

Բայց արձանադրական վկայութիւններն ու դիմական մտքի յայտնութեածութիւններն այնքան բացորոշ են, որ հնարաւոր չէ անտարբերութեամբ անցնել Հուրրիների գոյութեան հարցի վրայից :

Գիլրի ՀԱՏԻՑԵԱՆ

Երուսաղեմ

⁵ Եղիա Ա. Քառունի, «Նախայակական Հայաստան» :